

Varoujean Poghosyan, *Les Massacres des Arméniens de Marache en 1920 (Recueil de Documents)*, Documents réunis et présentés par Varoujean Poghosyan, Erevan, 2010, 163 p.

Հրապարակի վրայ է երևանի Պետական Համալսարանի Հայագիտական Հետազոտությունների Ինստիտուտի առաջ գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսեանի հեթրական աշխատությունը, որը ֆրանսերեն է անգլերեն լեզուներով փաստաթղթերի արժեքատու ժողովածու է 1920ին Կիլիկիայի Մարաշ քաղաքում քեմալականների կողմից իրականացրած հայերի վայրագ կոտորածների մասին: Հայաշատ այս քաղաքի քրիստոնեայ բնակչությունը 1920ի Յունուարի վերջին եւ Փետրուարի սկզբին քեմալական Թուրքիայի կողմից ենթարկուեց անասելի դաժան կոտորածի: Մարաշի աղետը ոչ այլ ինչ էր, քան քաղաքի վերջին ողբերգական իրադարձությունը (կոտորածներ եղել են նաեւ նախորդ ժամանակաշրջաններում, որոնց յաջորդել է հայերի տարագրությունը):

Պողոսեանի հրատարակած փաստաթղթերի փոքր մասն անցելու է օգտագործել են հայ եւ այլազգի սակաւաթիւ հետազոտողներ: Այս առումով յատկապէս մեծ է մարաշցի հեղինակ, դէպքերի ակամատես՝ Գրիգոր Գալուստեանի վաստակը: Սակայն առ այսօր չկար փաստաթղթերի որեւէ ժողովածու, որն ամփոփէր այս տարատեսակ վաւերագրերը՝ գիտական հիմնադրումներով: Հայոց Յեղասպանութեան պատմագրութեան մէջ այդ բացը լրացրել է Պողոսեանը, որի համար մենք մեծապէս շնորհակալ ենք նրան:

Գրքում գտնելու է փաստաթղթերը նա բաժանել է երեք առանձին խմբերի. ա) եւրոպական առաջատար մամուլի ճիւղեր («Թայմզ», «Մանչեսթր Գաղղիքը», «Տան»), որոնք շրջանառութեան մէջ է դրել առաջին անգամ. բ) այլազգի եւ հայ ժամանակակիցների վկայություններ, որոնց մի մասը քաղել է հայկական արխիւներից. գ) Մարաշի կոտորածների մասին՝ հասարակական կարծիքն արտացոլող տարաբնույթ վաւերագրեր:

Պողոսեանի հրատարակած հարուստ վաւերագրերը հեթրական անգամ աներկբայօրէն վկայում են, որ քեմալականները փաստօրէն շարունակել են իրենց նախորդների՝ սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի եւ իթքիհատականների հայաջինջ քաղաքականությունը, որն այս ժամանակաշրջանում կիրառուել է նաեւ արեւելահայերի նկատմամբ: Այդ վաւերագրերը հոգեւտանջ են եւ հնարատու չէ դրանք ընթերցել առանց յուզմունքի: Օրինակ, ընտրուած վաւերագրերից մէկում նշում է, թէ ֆրանսիացիների ետ քաշուելուց յետոյ, ինչպէս է բուրք խուժանը սպանուած հայազգի երեւելիներից Յակոբ աղա Քըլաքեանի կտրուած գլուխը սուիմի ծայրին ամրացրած վայրի աղաղակներով ցուցադրել ամբոյսին:

Այս փաստաթղթերը վկայում են նաեւ, որ 1920ի Մարաշի կոտորածը, նախ եւ առաջ հետեւանք էր քաղաքում տեղակայուած ֆրանսիական զօրամասերի հրամանատարութեան դաւաճանութեան: Նախորդ կոտորածներից հրաշքով փրկուած հայերը ֆրանսիացիների Կիլիկիա մուտք գործելուց յետոյ մեծ յոյսեր փայփայելով վերադարձել էին իրենց հայրենի օջախը՝ ապաւի-

նելով քրիստոնեայ, քաղաքակիրք Ֆրանսիայի աջակցութեանը: Սակայն, Ֆրանսիական Գ. Հանրապետութեան կառավարութիւնը զաղտնի բանակցութիւններ վարելով քեմալականների հետ եւ հաւաստիանալով, որ վերջիններս պատրաստ են վճարելու օսմանեան պարտքը՝ նախընտրել է Կիլիկիայում դիմել նահանջի, Սիրիայում ֆրանսիական բանակի զօրավարների միջոցով կարգադրելով լքել Մարաշը եւ տեղի հայութեանը թողնել բուրքերի ողորմածութեանը, որի հետեւանքով զոհուել են շուրջ 16000 մարաշցի հայեր:

Ֆրանսիական կառավարութեան դաւաճանական այդ քայլը յետագայում խոստովանել են ֆրանսիացի տարբեր գործիչներ, այդ թւում անձամբ՝ Մարաշում ֆրանսիական զօրքերի հրամանատար՝ գնդապետ, յետագայում՝ գեներալ է. Բրեմոնը, որից երեք մերկացուցիչ վկայութիւններ գետեղուած են ժողովածուի վերջին բաժնում: Նրանց, ինչպէս եւ այլազգի անաչառ ականատեսների վկայութիւնները, որոնք բացայայտում են պաշտօնական Ֆրանսիայի դաւաճանական քաղաքականութեան հաւաստի դիմագիծը, Պօղոսեանը բարեխղճօրէն ժողովել է տոյն բաժնում: Միաժամանակ նա այստեղ ընդգրկել է եւրոպական տարբեր լրագրերի՝ հակոտնեայ գնահատականներ պարունակող որոշ հաղորդագրութիւններ: Կը ցանկանայի խօսքս կենտրոնացնել, մասնատրապէս ֆրանսիական կառավարամէտ *Temps*ի եւ Ֆրանսիական Սոցիալիստական Կուսակցութեան օրգան *Humanite*ի անյարիր դիրքորոշումների ներկայացման վրայ: Եթէ *Temps*ի հաղորդագրութիւնները միտուած լինելով ֆրանսիական կառավարութեան քաղաքականութեան արդարացմանը, մեկնաբանում էին ֆրանսիական զօրքերի նահանջը երկրորդական պատճառներով, ապա փոխարէնը, սոցիալիստներն անողոր քննադատում էին իրենց կառավարութեանը: Իրադարձութեանը տուած տարբեր մեկնաբանութիւնների բաղդատումը եւ համարում են Պօղոսեանի արժանիքներից:

Պարտք են համարում երկու խօսք ասել ժողովածուն կազմողի մասին: Վարուժան Պօղոսեանը վաղուց ապացուցել է, որ բացառիկ պատմաբան է եւ այդ բացառիկութիւնը ոչ միայն տարբեր լեզուների հիանալի իմացութեան մէջ է, այլեւ նրա պատմագիտական փայլուն պատրաստութեան: Այդ մասին են վկայում ժողովածոնում գետեղուած նրա առաջաբանը (ֆրանսերէն եւ հայերէն լեզուներով) եւ ծանօթագրութիւնները (ֆրանսերէն լեզուով), որոնք ընթերցողի համար խիստ շահեկան են:

Վերջին տարիներին Պօղոսեանի կատարած՝ եւրոպացի պատմաբանների ուսումնասիրութիւնների բազմաթիւ թարգմանութիւնները, շատ կողմնորով ուսանելի են: Այսպէս, դրա ապացոյցն են Արթիւր Պէյլերեանի աշխատասիրութեամբ լոյս ընծայուած՝ Հայկական Հարցի պատմութեան մասին փաստաթղթերի կոթողային, ստուարածաւալ ժողովածուի եւ այլոց՝ հայ ժողովրդի պատմութեան տարբեր հիմնահարցերի վերաբերեալ աշխատութիւնների թարգմանութիւնները՝ Ցանկալի է, որ այս անգամ եւս Պօղոսեանն իր իսկ հրատարակած՝ 1920ի Մարաշի աղէտին վերաբերող փաստաթղթերի ժողովածուն թարգմանի հայերէն:

ՄԱՆՈՒԷԼ ԶՈՒԼԱԼԵԱՆ

- ¹ Գ. Գալուստեան, *Մարաշ Կամ Գերմանիկ եւ Հերոս Տէրուն*, Բոստոն, 1934: Որոշ լրացումներով վերահարատարակուել է Նիւ Զըրսիում 1948ին:
- ² Արքիւր Պէլլերեան, *Մեծ Տէրութիւնները, Օսմանեան Կայսրութիւնը եւ Հայերը Ֆրանսիական Արիսիւններում (1914-1918)*, Հտր. 1-2, Երեւան, 2005. նաեւ՝ Մ.-Ա. Շեալիւ, *Կիլիկեան Հայաստանի եւ Հոգեւոր Ասպետական Միաբանութիւնների Փոխարարելութիւնների Պատմութիւնից*, Երեւան, 2007, եւն.: